## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-ԻՆ ԹԵՀՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱ-ՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍ-ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 17 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի հունիսի 25-ին՝ Երեւանում եւ 2008 թվականի հուլիսի 19-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի հիդրոէներգետիկ նախագծի ուսումնասիրության եւ իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանային երթեւեկության դյուրացման կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ` ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի բացատրությունները, հետազոտելով կանոնակարգը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի հիդրոէներգետիկ նախագծի ուսումնասիրության եւ իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանային երթեւեկության դյուրացման կանոնակարգն ստորագրվել է 2008 թվականի հունիսի 25-ին Երեւանում եւ 2008 թվականի հուլիսի 19-ին Թեհրանում՝ երթեւեկությունը եւ Արաքս գետը հատելը դյուրացնելու, ինչպես նաեւ ուսումնասիրության տարածքում ժամանակավոր բնակության վայրերի, վարարումները կանխելու համար նախատեսված կառույցների եւ հիդրոէներգիայի օգտագործման համար նախատեսված տարածքների հիմնումը՝ հիդրոէլեկտրակայանների նախագծումն ու կառուցումն իրականացնելու համար համապատասխան պայմաններ ստեղծելու նպատակով:

**2.** Կանոնակարգով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Շինարարության ընթացքում Հայաստանի եւ Իրանի տարածքներում առանձնացնել երկու ընդհանուր գոտիներ: Երաշխավորել, որ այդ գոտիների սահմանազծման համապատասխան աշխատանքներն ավարտվեն կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:
- Իրականացնել երթեւեկության դյուրացումներ շինարարության ընթացքում Հայաստանի եւ Իրանի տարածքներում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանապահ մարմինների կողմից առանձնացված երկու ընդհանուր գոտիներում: Ընդհանուր գոտիների մուտքի եւ ելքի մոտ տեղակայել սահմանապահների կողմից հսկվող անցակետեր:
- Երաշխավորել Արաքս գետի հիդրոէլեկտրակայանների նախագծման եւ կառուցման աշխատանքներում ներգրավվող մասնագետների եւ բանվորների

երթեւեկության, Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանը հատող փոխադրամիջոցների, սարքավորումների, շինանյութերի եւ շինարարության ընթացքում անհրաժեշտ այլ պարագաների փոխադրման դյուրացումները:

- Հիդրոէլեկտրակայանների նախագծման ու կառուցման ընթացքում աշխատանքներն իրականացնող մասնագետներին եւ բանվորներին տրամադրել անցագրեր՝ կանոնակարգով նախատեսված կարգով:
- Հոգալ իր տարածքի սահմաններում ժամանակավոր բնակության վայրերի, վարարումները կանխելու համար նախատեսված կառույցների եւ հիդրոէներգիայի օգտագործման համար նախատեսված տարածքների ուսումնասիրության, նախագծման, պատրաստման ու կառուցման հետ կապված ծախսերը:

**3.** Կանոնակարգի հայերեն, պարսկերեն, անգլերեն տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

**4.** Կանոնակարգն ուժի մեջ կմտնի Կողմերի ներպետական օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ ընթացակարգերն ավարտելու մասին վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից եւ ուժի մեջ կմնա մինչեւ Արաքսի հիդրոէլեկտրակայանի շահագործման վերջնական հանձնման մասին հայտա- րարության կազմումը Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարական հանձնաժողովների կողմից:

**5.** Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

**1.** 2008 թվականի հունիսի 25-ին՝ Երեւանում եւ 2008 թվականի հուլիսի 19-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի հիդրոէներգետիկ նախագծի ուսումնասիրության եւ իրականացման շրջանակներում

Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանային երթեւեկության դյուրացման կանոնակարգում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

17 փետրվարի 2009 թվականի
ՍԴՈ- 788